ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 145-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 11-Ը ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 14 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 11-ը հոկտեմբերի 2024 թվականի թիվ 14 հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 11.10.2024թվականի թիվ 14 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Արենի համայնքի վարչական տարածքում գտնվող, քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելուն համաձայնություն տալու մասին:

3. Արենի համայնքի 2024թվականի բյուջեի կատարման 3-րդ եռամսյակի հաշվետվությունն ի գիտություն ընդունելու մասին:

4. Արենի համայնքի ավագանու 25.01.2024թվականի թիվ 002-Ն որոշմամբ հաստատված 2024թվականի տարեկան բյուջեում հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին:

5. Արենի համայնքի Չիվա բնակավայրում նոր մանկապարտեզի կառուցման ծրագրին հավանություն տալու մասին:

6. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից օտարելու մասին: